Ընտրություններ առանց ընտրության. ինչո՞ւ 2026-ի ընտրարշավը Հայաստանում կդառնա վախի հանրաքվե[1]

Փորձագետի տեսակետ

Նորայր Ա. Դունամալյան[2]

Ներածություն

Հարաբերական դեպրիվացիայի (զրկանքի) հայեցակարգը, որը մշակել են ամերիկացի հետազոտողներ Թ. Հարրը և Ջ. Դևիսը, քաղաքական վարքագիծը բացատրում է հասարակության սպասումների և նրա իրական հնարավորությունների միջև եղած խզվածքի միջոցով: Որքան ուժեղ է այն զգացողությունը, որ «*հարկ եղածը*» և «*իրականը*» տարբերվում են իրարից, այնքան բարձր է կոլեկտիվ հիասթափության մակարդակը: Սակայն հետպատերազմյան հասարակություններում նման հիասթափությունը միշտ չէ, որ հանգեցնում է բողոքի մոբիլիզացման: Տրավմայի որոշակի շեմն անցնելուց հետո այն կարող է հակառակ ազդեցություն ունենալ՝ փոփոխությունների վախ, քաղաքական ապատիա և նույնիսկ անբավարար ստատուս քվոն պահպանելու ցանկություն:

Սույն մեկնաբանությունը Հայաստանում խորհրդարանական ընտրությունները դիտարկում է հենց այդ հայեցակարգի շրջանակներում:

Հակավարկանիշներից մինչև զրկանքների քարոզչություն

Հայաստանում 2021 թ. խորհրդարանական ընտրությունները պատմության մեջ մտան որպես հակավարկանիշների մրցավազք: Հասարակությունը քվեարկում էր ոչ այնքան քաղաքական ապագայի օգտին, որքան անցյալի վերադարձի դեմ: 2020-ի պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանի հաղթանակը միայն առաջին հայացքից էր տարօրինակ թվում. ընտրողը տրավմատիկ ներկայի պահպանումը գերադասեց հին համակարգի վերականգնման ռիսկից (ՔՊ-ն՝ 53,9%, «Հայաստան» դաշինք՝ 21,0%, «Պատիվ ունեմ» դաշինքը՝ 5,2%): Դա զգացմունքային, բայց միանգամայն հասկանալի տրամաբանություն էր «*չարյաց փոքրագույնը*» ընտրելու համատեքստում:

2026 թ. ընտրությունների քաղաքական բնույթը որակապես փոխվել է: Եթե 2021 թ. ընտրազանգվածի հավաքագրման առանցքային մեխանիզմը քաղաքական վերնախավերի փոխադարձ հակավարկանիշն էր, ապա այսօր Հայաստանը նոր ընտրական փուլ է մտնում խորը գոյութենական դեպրիվացիայի՝ անվտանգության բազային ակնկալիքի և իրականության միջև խզվածքի վիճակում, որի մեջ վերջնականապես կորսվել է այդ անվտանգությունը: Արցախը (Լեռնային Ղարաբաղը) պարզապես տարածք չէր, այն ազգային պատումի մաս էր կազմում: Երբ զրկանքի

[1] Հեղինակի թարգմանություն: Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 22.05.2026 թ.:

[2] Քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ: Հեղինակ է ավելի քան 30 գիտական աշխատությունների և հոդվածների:

հռետորաբանությունը դիմում է հավաքական ինքնության հենց այս շերտին, այն պառակտում է հասարակությունը ոչ թե քաղաքական, այլ գոյութենական սահմանագծերով: Նման պառակտումները չեն բուժվում կառավարության փոփոխությամբ, դրանք վերարտադրվում են սերնդեսերունդ:

Հայկական քաղաքականության գլխավոր պարադոքսն այն է, որ տնտեսական ցուցանիշները դադարել են լինել իշխանության լեգիտիմության հիմնական աղբյուր: ՀՆԱ-ի աճի և մակրոտնտեսական կայունացման համապատկերում հանրային դժգոհությունը ոչ թե նվազում է, այլ, ընդհակառակը, քրոնիկ բնույթ է ստանում (Հայաստանի ՀՆԱ-ի աճը 2025 թ.՝ 7,2%, երկրի ընդհանուր քաղաքականությունից դժգոհության մակարդակը՝ ըստ *IRI Global*-ի, մոտ 50%): 2023 թ. իրադարձություններից հետո հայ հասարակությունն անվտանգության ապահովումն ընկալում է ոչ թե որպես պետության վերացական գործառույթ, այլ որպես հավաքական գոյության հիմնարար հիմք: Երբ այս հիմքը քանդվում է, տնտեսական աճը չի փոխհատուցում կորուստները: Այն միայն ուժեղացնում է պաշտոնական վիճակագրության և հասարակության ներքին վիճակի միջև անհամամասպատասխանելիության զգացումը:

Իշխանությունն իր «*խաղաղության օրակարգի*» միջոցով փաստացի սեփական հայեցողությամբ է ձևավորում և՛ հանրային սպասումները, և՛ իրականությունը՝ կառուցելով զրկանքի թեզը «*եթե մենք չլինենք՝ պատերազմ կլինի*» սկզբունքի վրա: Նմանատիպ տրամաբանություն է նկատվում նաև «*խաղաղության օրակարգի*» մասին հռետորաբանության մեջ, որտեղ «*փոխզիջումներին*» ցանկացած դիմադրություն ներկայացվում է որպես նոր պատերազմի, միջազգային մեկուսացման կամ տնտեսական կոլապսի սպառնալիք: Փաստորեն, քաղաքացուն առաջարկվում է ընտրություն ոչ թե ապագայի այլընտրանքային մոդելների, այլ «*վատ ներկայի*» և «*աղետի*» միջև:

Այնուամենայնիվ, «*զրկանքի քարոզչությունն*» օգտագործվում է ոչ միայն իշխանության կողմից: Ընդդիմադիր ուժերը նույնպես դիմում են կորստի վախին, բայց արդեն այլ ձևով: Համակարգված կերպով հանրային տարածք են ներմուծվում «*պետականության կորստի*», «*Հայաստանի թրքացման*», «*ինքնիշխանության հանձնման*», «*բանակի կազմաքանդման*» կամ «*Ռուսաստանի հետ վերջնական խզման*» մասին թեզերը: Արդյունքում երկու կողմերն էլ ուժերի մոբիլիզացում են իրականացնում ոչ թե ապագայի դրական պատկերի, այլ անդառնալի կորստի վտանգի շուրջ:

Այսպիսով, հայաստանյան քաղաքական համակարգը ծրագրերի մրցակցությունից անցնում է «*զրկանքների ու վախերի մրցակցության*». յուրաքանչյուր կողմ փորձում է համոզել հասարակությանը, որ հենց իր պարտվելու դեպքում երկիրը կկրի ամենացավոտ ու անդառնալի կորուստները:

Պատերազմի վտանգը հունիսի 7-ի նախաշեմին հասարակության մեջ բազմապատիկ ուժգնությամբ է արձագանքում, քանի որ սպասումներն և առկա իրականությունը դեռ հեռու են իրարից: Չնայած 2025 թ. օգոստոսի 8-ի վաշինգտոնյան պայմանավորվածություններին,

Ադրբեջանի հետ տնտեսական կապերի զարգացմանը և ընդհանուր հաշտվողական հռետորաբանությանը՝ կայուն երաշխիքների վրա հիմնված իրական ու արժանապատիվ խաղաղություն այդպես գոյություն չունի: Եվ հենց անվտանգային երաշխիքների այս վակուումում էլ արմատավորվում է «զրկանքի քարոզչությունը»:

Որպես արդյունք՝ Հայաստանում ձևավորվում է «***բացասական կայունության***» մոդել: Դրա էությունն այն է, որ **քաղաքացիները կարող են խորապես դժգոհ լինել իշխանությունից, բայց միաժամանակ ցանկացած արմատական փոփոխությունից ավելի ուժեղ վախենալ, քան ներկա քաղաքական ընթացքի շարունակությունից**: Սա այն հիմնական գործոնն է, որով 2026 թվականի իրավիճակը տարբերվում է 2021-ից. այն ժամանակ հասարակության մեջ դեռ կար քաղաքական համակարգի առողջացման ու վերագործարկման հույսի նշույլ: Այսօր արդեն առաջնային պլան է մղվել համատարած հոգնածությունը մշտական լարվածությունից, ճգնաժամերից և պատմական անորոշության զգացումից:

Նախընտրական ուժերի համախմբման երկու տեխնոլոգիա՝ «զրկանքի քարոզչություն» և պառակտում

Խաղաղության, զարգացման կամ կայունության կորստի վրա շեշտադրումը խորացնում է հասարակության ներքին ջրբաժանը՝ ձևավորելով քաղաքական հարաբերությունների յուրահատուկ, տոքսիկ մոդել: Հայաստանում ստեղծվում է մի իրավիճակ, երբ ներկայիս կամ պատմական օրակարգի հիման վրա հասարակության համախմբումը գրեթե անհնար է, իսկ միավորման կոչերն անխուսափելիորեն վերածվում են այլախոհների որոշակի խմբերի «դուրս մղման»: Եթե իշխանությունը զրկանքը օգտագործում է որպես գործիք, ապա ընդդիմությունը ստանում է իշխանության դեմ այն օգտագործելու հայելային իրավունք: Հասարակությունն իր խնդիրներն սկսում է բացատրել ոչ թե հանգամանքներով, այլ թշնամիներով՝ արտաքին կամ ներքին: Դա ցեղայնացման (տրայբալիզմի) դասական մեխանիզմ է, երբ հանրությունը տրոհվում է փակ, միմյանց թշնամաբար վերաբերվող և երկխոսության անընդունակ խմբերի:

Ըստ ամենայնի, ՀՀ գործող վարչապետ Ն. Փաշինյանը փորձում է օգուտ քաղել հասարակության մեջ առկա պառակտումից՝ կենտրոնանալով իրեն կայուն սատարելու պատրաստ ընտրազանգվածի 15-20%-ի վրա: Ընտրություններից առաջ օգտագործվում է նույն տեխնոլոգիան, ինչ 2021 թվականին. քաղաքական դաշտը արհեստականորեն հեղեղվում է նորանոր կեղծ օրակարգերով ու կոնֆլիկտներով, որպեսզի ընդդիմադիր կամ դժգոհ զանգվածի մի զգալի մասը հիասթափվի և պարզապես չգնա ընտրությունների: Քաղաքականության պարզունակացումը թույլ է տալիս անհրաժեշտության դեպքում թիրախավորել ցանկացած լսարան՝ արցախցի փախստականներ, փոքր բիզնեսի ներկայացուցիչներ, երիտասարդներ, Սփյուռքի հայ համայնքներ: Հատկանշական է Փաշինյանի այն հայտարարությունը, թե «Հայաստան» դաշինքը, «Ուժեղ Հայաստան» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունները չպետք է մտնեն խորհրդարան. սա սեփական

կամքով **թույլատրելի ընդդիմության սահմանները** գծելու փորձ է՝ դեռևս մինչև քվեների փաստացի հաշվարկը:

Մյուս կողմից, «*զրկանքի քարոզչությունը*» դառնում է նոր գործիք՝ ներգրավելու այն խմբերին, որոնք իշխանության կողմնակից չեն, բայց փաստորեն կողմ են արդեն հիշատակված «*բացասական կայունությանը*»: Հարցումների տվյալներով՝ ընտրողների մոտ 40%-ը պահպանում է «չկողմնորոշվածի» կարգավիճակը. հենց նրանց որոշումից է կախված հունիսի 7-ի վերջնական արդյունքը: Խնդիրը, սակայն, այն է, որ հանրային պառակտման և «*զրկանքի քարոզչության*» համադրումը հանգեցնում է ընդհանուր ապագայի տեսլականի փլուզմանը: Մշտական կենտրոնացումը վատթարագույն սցենարները կանխելու վրա ոչ մի զարգացման հեռանկար չի առաջարկում, այլ միայն խոստանում է «թույլ չտալ էլ ավելի վատը»: Նման մթնոլորտում հասարակական կոնսենսուսը դառնում է անհասանելի, քանի որ տարբեր խմբեր չեն կարողանում համաձայնության գալ անգամ այն հարցի շուրջ, թե հատկապես ինչ է կորսված և ով է դրա գլխավոր պատասխանատուն:

Այս համապատկերում խորանում է ընդդիմադիր դաշտի մասնատումը: Հունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ գրանցվել է 19 քաղաքական ուժ՝ 17 կուսակցություն և 2 դաշինք: Կուսակցությունների համար 4%-անոց և դաշինքների համար 8%-անոց ձայների նվազագույն շեմով համամասնական համակարգը խթանում է մրցակցությունը բողոքական ընտրազանգվածի նեղ հատվածների համար: Նման մոդելում առանձին առաջնորդների համար հաճախ ավելի ձեռնտու է պահպանել սեփական 4-10%-ը և ներկայությունը խորհրդարանում, քան ռիսկի դիմել մեկ ուժի կենտրոնի շուրջ միավորվելու համար: Արդյունքում հանրային դժգոհությունը փոշիանում է մի քանի բևեռների միջև և չի վերածվում իշխանության միասնական այլընտրանքի:

Այս համապատկերում ուժեղանում է նաև արտաքին ճնշումը: Տնտեսական կախվածությունը, լոգիստիկ խոցելիությունը և արտաքին քաղաքական խուսավարման սահմանափակությունը ներքաղաքական ճգնաժամը վերածում են աշխարհաքաղաքական ազդեցության գործիքի: Սոցիալ-տնտեսական իրավիճակի ցանկացած վատթարացում հանրության շրջանում անմիջապես ծնում է արտաքին «փրկչի» կամ «կայունացնողի» պահանջ: Սակայն հայ հասարակությունը 2022–2023 թթ. հետո միատարր չէ արտաքին խաղացողների ընկալման հարցերում. դրսից եկող ճնշումը մի կողմից առաջացնում է հին դաշնակցային կապերը վերականգնելու ցանկություն, մյուս կողմից՝ էլ ավելի է մեծացնում դրանցից վերջնականապես դիստանցավորվելու ձգտումը:

Եզրակացության փոխարեն

2026 թվականի հունիսի 7-ի ընտրությունները սպառնում են դառնալ ոչ թե ապագայի այլընտրանքային նախագծերի պայքար, այլ հանրային հոգնածության արձանագրման մեխանիզմ: Եթե 2021-ի ընտրությունները փորձ էին որոշելու, թե ո՞վ կարող է երկիրը դուրս

բերել ճգնաժամից, ապա 2026-ի ընտրավազքն առավելապես **վախի թույլատրելի մակարդակի հանրաքվե** է հիշեցնում:

Նմանատիպ համակարգերում հաղթում է ոչ թե նա, ով հույս է ներշնչում, այլ նա, ով կարողանում է ավելի հմտորեն կառավարել հասարակության ներքին տագնապները: Հայ հասարակությունն այս ընտրական փուլ է մտնում հետխորհրդային ողջ պատմության ընթացքում հավաքական տրավմայի ամենաբարձր մակարդակով: Զրկանքի ու վախերի հռետորաբանությունը՝ լինի դա պատերազմի, լիակատար մեկուսացման, թե պատմական կորստի սարսափը, դարձել է հայկական քաղաքականության հիմնական հենասյունը:

Այս համապատկերում Հայաստանում Եվրոպական աննախադեպ ներկայությունը՝ Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովից մինչև ԵՄ-ի հետ երկխոսության խորացում, դեռևս չի փոխում ներքին քաղաքականության հիմնարար տրամաբանությունը: Եվրոպական ինտեգրումը նույնպես սկսում է ընդգրկվել դեպրիվացիոն մոբիլիզացման համակարգում. հանրությանը մատուցվում է ոչ թե ապագայի հստակ ու դրական հեռանկար, այլ *«եվրոպական պատմական շանսը»* բաց թողնելու կամ, ընդհակառակը, սեփական ռազմավարական ինքնուրույնությունը վերջնականապես կորցնելու վախը:

Ռուսաստանի վարքագիծն այս համատեքստում նույնպես ակամայից նպաստում է գոյություն ունեցող քաղաքական կառուցվածքի վերարտադրմանը: ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի միջև ընտրության հարցի կոշտ ձևակերպումն առարկայորեն սաստկացնում է ներհայաստանյան բևեռացումը և լրացուցիչ հող է ստեղծում «*արտաքին միջամտության*» դեմ ուժերի մոբիլիզացման համար: Հեռանկարում հենց այստեղ կարող է ի հայտ գալ «մոլդովական սցենարը»՝ եվրաինտեգրման ներառումը նոր սահմանադրական շրջանակում՝ որպես պետության քաղաքական ինքնությունը վերասահմանելու լրացուցիչ միջոց:

Հենց դա է Հայաստանում 2026 թ. ընտրությունները դարձնում ոչ թե պարզապես ընտրական փուլ, այլ հետպատերազմական հասարակության՝ քաղաքական տրավմայից դուրս գալու կարողության թեստ: Գլխավոր հարցն արդեն ոչ միայն այն է, թե ով կհաղթի ընտրություններում, այլ այն, թե արդյո՞ք հայ քաղաքական դասը կկարողանա հասարակության հետ կրկին խոսել ապագայի, այլ ոչ թե վախի լեզվով: